

կրնայ ամենադժբախտին ընծայ մը ընել և անոր վրայ մեծ յարգ մը կապել։ վասն զի սրտանց ու դիտմամբ կ'ընէ։ և ասանկ չնչին ընծայ մը տալու համարձակելով, կը ցուցնէ որ իր սիրտը շատ վեր է քան իր ճոխութիւնը։ և անանկ որ ինչ և իցէ ընծայ յարգելի կ'ընէ։ Բայց վայ եթէ ընծային հետ պահանջողական կերպ մը ցուցնէ։ Պէտք չէ ստելով զուրցէ որ լաւագոյնը գրտնելու կրցած չէ։ և ոչ ալ ձեւացնէ որ ընծայն արժէքէն աւելի կը յարգէ։ և ոչ — որ յոռեգոյն է — հարցընել թէ ախորժելի է, օգտակար կրնայ ըլլալ, և այլն։

Լաւագոյն է երբեք չտալ՝ քան թէ կրցածէն պակաս տալ։

Շնորհքով ընծայ մը ընդունիլ՝ տուողին դիտաւորութիւնը ուղիղ դատելով, այնչափ կ'արժէ՝ որչափ թէ փոխարինած ըլլայիր։

Պէտք չէ մեղի անծանօթ եղած մարդիկներու ընծայ ղրկենք, բաւական է որ զուրկ չըլլան ինչ և իցէ կարեւորութենէ՝ ինչուան որ ստոյգ չգիտնանք մեր ընծայելու պատճառ և առիթ ունենալը, և թէ մեր ընծայն ախորժելի պիտոր անցնի։ վասն զի հակառակը ընելով՝ անհամեստութեան և կոպտութեան նշան մը կ'ըլլայ։ Իրաւ է որ ընկերութեան մէկ քանի դասերու մարդիկ այնչափ ուշադրութիւն չեն դնել այս կանոնիս, և տղայամիտ ու դիւրաբորբոր բնաւորութիւններ, անդէտ աշխարհիս ակնածութեանց, շատ անգամ այսպիսի ընծայներ ընելու կը բերին։ սակայն այս ստոյգ է որ ասոր մէջ անձնասիրութիւնն է գլխաւորապէս որ կը գործէ։ Այս կանոնէս կրնան բացառութիւն մը ըլլալ այն մեծ ու հազուագիւտ հանճարներուն՝ որ իրենք իրենց անձին օրէնք կրնան ըլլալ, ու կը պատուեն զայն՝ որ յիշելու արժանի կը սեպեն։

ՄԱՆՐԱՎԷՊ ՄԸ

Թիւրէն՝ իր բանակին մէջ պարկեշտ բայց աղքատ սպայ մը տեսած ըլլալով որ գէշ ձի մը ունէր, սեղանը հրաւիրեց զինքը, ու կերակրէն ետքը առանձին տեղ մը ազնուութեամբ սրտի այս ըսաւ իրեն. « Գեղի մէկ աղաչանք մը ունիմ ընելու՝ որ քիչ մը համարձակ երկնայ պիտի, բայց կը յուսամ որ զօրավարիդ չուզենաս պիտի բան մը ժրխտել։ Ես ծեր ու հիւանդոտ եմ, շատ աշխոյժ ձիերը անհանգստութիւն ու տառապանք կու տան ինծի։ դուն մէկ մը ունիս՝ որուն վրայ ամենահանգիստ կրնամ նստիլ։ Եթէ վախ չունենայի որ խնդիրքովս քեզի մեծ զոհ մը ընել կու տամ, կ'ուզէի աղաչել որ ինծի շնորհէիր քուկինդ։ Սպայն ուրիշ պատառխան չտուաւ եթէ ոչ խորին յարգութիւն մը ընելով, գնաց շուտ մը ձին առաւ ու Թիւրէնի ախոռը տարաւ։ Այս զօրավարը երկրորդ օրը՝ բանակին ամենէն ընտիր ու գեղեցիկ ձիերէն մէկը անոր ղրկեց։

ՀԻՆԳ ԾԱԲԱԹ ՕԳԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տէս երես 148)

ԳԼՈՒԽ Ժ.

Յառաջընթաց փորձեր. — Տորդորին հինգ արկղերը. — Կազի բոցարծարծը. — Ջերմատարը. — Կառավարելու կերպը. — Ստոյգ յաջողութիւն։

« Շատ անգամ, պարոնայք, այլ և այլ մարդիկ փորձ փորձած են ըստ կամս վեր ելլել կամ վար իջնել, առանց օգտապարկի մը կազը կամ նաւախիճը կորսնցնելու։ Գաղղիացի օդանաւորդ մը, Պարոն Մօէնիէ, օդը ներքին ընդունարանի մը մէջ ճնշելով, կ'ուզէր այդ